ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք.Ալավերդի, (0253) 2-41-00, alaverdi.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2022 թվականի N 7-Ա

ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 12.07.2021Թ. N 229-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշումով, ՀՀ կադաստրի կոմիտեի ղեկավարի 2021 թվականի մայիսի 10-ի «Անշարժ գույքի հասցեավորման հայտի ձևը սահմանելու մասին» N 104-Լ հրամանով, հիմք ընդունելով էդգար Սամվելի Մադոյանի դիմումը, անձնագրերի պատճենները, սեփականության իրավունքի N 16072021-06-0050 վկայականը, Աքորի գյուղի վարչական ղեկավարի կողմից 17.10.2022թ տրված N 1253 տեղեկանքը, քաղաքաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի առաջարկությունը ***որոշում եմ***՝

Ալավերդի համայնքի ղեկավարի 12.07.2021թ. «Փոստային հասցե տրամադրելու մասին» N 229-Ա որոշման մեջ կատարել փոփոխություն. «նրբանցք» բառի փոխարեն կարդալ «փակուղի» բառը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԿԱԴԻ ԹԱՄԱԶՅԱՆ

2022թ. հոկտեմբերի 24
ք. Ալավերդի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք.Ալավերդի, (0253) 2-41-00, alaverdi.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2022 թվականի N 8-Ա

ՍԵՓԱԿԱՆ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ ԵՎ ԱՆԱՍՆԱՇԵՆՔԵՐՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ, 43-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ, 5-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 18.05.2006թ. N 912-Ն որոշման 8-13-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 05.01.2022թ. N 13-Ն, 05.01.2022 թ. N 14-Ն, 11.02.2021 թ. թիվ 160-Ն, 04.06.2020 թ. թիվ 1023-Ն որոշումներով, Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելո ւմասին՝ ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասի 6 –րդ կետով, հաշվի առնելով, որ ինքնակամ կառուցված բնակելի տունը, անասնաշենքերը չեն խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ, պահպանում են քաղաքաշինական նորմերը, հիմք ընդունելով Սեդա Արկադիի Թումասյանի դիմումը, անձնագրերի պատճենները, սեփականության իրավունքի N 01042019-06-0017վկայականը, «ՏՍ-Ռիելթի» ՍՊԸ-ի կողմից տրված կադաստրի կոմիտեում ինքնակամ կառույցի հաշվառման տեղեկանքն ու հողամասի և շինության հատակագծերը ***որոշում եմ՝***

1. Օրինականացնել Սեդա Արկադիի Թումասյանին, Նոննա Սամվելի Բեգլարյանին ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող, մարզ Լոռի, համայնք Ալավերդի, գյուղ Մեծ Այրում, 3-րդ փողոց, 63 հասցեում գտնվող, ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող, 0.171 հա մակերեսով բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասում գտնվող, այլ անձանց իրավունքները և օրենքով պահանջվող շահերը չխախտող, առանց քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումների իրականացրած

և հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք չառաջացնող՝ 2019 թվականին կառուցված, կադաստրի կոմիտեում 2022K3Q3F7 ծածկագրով հաշվառված, 166.0 քմ արտաքին մակերեսով (135.2 քմ ներքին մակերեսով) բնակելի տունը և 22.5 քմ ընդհանուր՝ արտաքին մակերեսով (17.9 քմ ներքին մակերեսով) անասնաշենքերը:

2. Օրինականացված շինությունների համար սահմանված 113260 (հարյուր տասներեք հազար երկու հարյուր վաթսուն) դրամ վճարը սահմանված 60-օրյա ժամկետում չվճարելու դեպքում որոշումը համարվում է ուժը կորցրած:
3. Հողամասն ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում:
4. Նշված իրավունքը ենթակա է պետական գրանցման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԱՐԿԱԴԻ ԹԱՄԱՋՅԱՆ**

2022թ. հոկտեմբերի 24
ք. Ալավերդի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք.Ալավերդի, (0253) 2-41-00, alaverdi.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2022 թվականի N 9-Ա

ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏ ԳՈՒՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ մասով ***որոշում եմ՝***

2022 թվականի հոկտեմբերի 31-ին, ժամը 11.00-ին գումարել Ալավերդի համայնքի ավագանու հերթական նիստը համայնքապետարանի վարչական շենքում՝ հետևյալ օրակարգով.

1. Ալավերդի համայնքի ավագանու 2022 թվականի հոկտոմբերի 31-ի հերթական նիստի օրակարգը հաստատելու մասին:

   (Զեկ. Ա. Թամազյան)
2. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի ավագանու կանոնակարգն ընդունելու մասին:

   (Զեկ. Ա. Թամազյան)
3. «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդու համայնքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկ հիմնադրելու մասին:

   (Զեկ. Ա. Թամազյան)
4. «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդու համայնքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկի կանոնադրությունը հաստատելումասին:

   (Զեկ. Ա. Թամազյան)
5. «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդու համայնքապետարանի աշխատակազմ», «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ախթալայի համայնքապետարանի աշխատակազմ», «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շնողի համայնքապետարանի աշխատակազմ», «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Օձունի համայնքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկների գործունեության դադարեցման մասին:

   (Զեկ. Ա. Թամազյան)

6. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի կազմում ընդգրկված բնակավայրերի վարչական ղեկավարների նստավայրերի մասին:

(Զեկ. Ա. Թամազյան)

7. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի կամավոր խնդիրները, դրանց լուծմանն ուղղված սեփական լիազորությունները և դրանց իրականացման կարգը սահմանելու մասին

(Զեկ. Ա. Թամազյան)

8. Համայնքի ղեկավարին կից խորհրդակցական մարմինների ձևավորման և գործունեության կարգը հաստատելու մասին:

(Զեկ. Ա. Թամազյան)

9. Համայնքում տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության կարգը հաստատելու մասին:

(Զեկ. Ա. Թամազյան)

10. Համայնքում հանրային բաց լսումների և (կամ) քննարկումների կազմակերպման և անցկացման կարգը հաստատելու մասին:

(Զեկ. Ա. Թամազյան)

11. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի տեղական ինքնակառավարման մարմինների կողմից քաղաքացիների ընդունելության կազմակերպման կարգը հաստատելու մասին:

(Զեկ. Ա. Թամազյան)

12. Հայաստանի Հանրապետության 2023 թվականի պետական բյուջեից սուբվենցիա ստանալու նպատակով ներկայացվելիք ծրագրերի նպատակահարմարության և Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից նպատակային հատկացում՝ սուբվենցիա ստանալու հայտերը հաստատելու մասին:

(Զեկ. Ա. Թամազյան)

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԿԱԴԻ ԹԱՄԱԶՅԱՆ

2022թ. հոկտեմբերի 24
ք. Ալավերդի